

քանից արաղի» (մի ըստակ էլ օղի)։ Միւս օրը սակայն վերացի Քիտօն հայհոյանքներով գալիս է նկարէի բնկարանը և իշոցներ է տալիս նրան։

Բանից դուրս է գալիս, որ Քիտոյին հաւատացրած են եղել, որ նկարիչը նրա պատկերը քաշել է իշխանութեան ներկայացնելու համար, որը եթէ հաւանի պատկերը-Քիտոյին զինւոր կրտսնեն, իսկ եթէ ոչ՝ հրացան կարծակեն պատկերի վերայ և Քիտօն էլ որտեղ և լինի կըմենի։

Այսպիսով Յ. Բաշինջաղեանը ոչ միայն տաղանդաւոր ներկարիչ է այլ և զբաղանակաւ նկարագրողի լաւ շնորհք ունի և ցանկալի է, որ նա չըդադարէ գրելուց, որովհետեւ հայրենի բնութեան և կեանքի գեղեցիկ պատկերներ կարող է ատեղծագործել։

ԳԱՐ. ԵՆԴ.

### ՎԱՀԱՆ ԹԱԽԱՐԱԷԴԵԱՆ. Բանաստեղծութիւններ. Տփլիս 1903

Մաքուր և գեղեցիկ հրատարակուած այս գրքովը արտաբխում լինում են բանաստեղծութիւններն է նմանում՝ փոքրիկ երեսներ, կարճ-կարճ տողեր, գեղեցիկ անուններ, ինչպէս «Սիրոյ նուագներ», «Մրմուռներ», «Նոր գարուն», և այլն։ Բայց դրանք, իմ կարծիքով, տպարանատիրոջ, սրբագրչի և մետրանպաժի ճաշակի և փորձառութեան մասին են խօսում, քան հեղինակի տաղանդի։ Վերջինս պէտք է փնտրել բանաստեղծութիւնների մէջ, սակայն բանաստեղծութիւններ չկան։ Կան ոտանաւորներ, որոնց մեծամասնութիւնը առանց տաղաչափութեան կանոնների են գրուած, ուստի և պրոզայի տպաւորութիւն են թողնում. օրինակ՝

Հուրջս գարուն է և յստակ

Լսում է սոխակի երգ,—

Միայն հոգիս է աւերակ,

Ուր երգ չէ հնչում երբէք։

Երկրորդ տողը փառաւոր պրոզայ է. էլ չեմ խօսում «յստակի» մասին, լերգ և երբէք» մասին և այլն։

Արձակ «ոտանաւոր» ի մի ուրիշ օրինակ՝

Այդպէս էլ ես, երբոր տեսայ

Չնաշխարհիկ քո աչեր,

Իսկոյն, սիրելիս, հասկացայ,

Որ դու պիտ լինիս իմ սէր...

Ես էլ չիսկոյն, սիրելիս, հասկացայ, որ դու բանաստեղծ չես։ Ինչ հարկ կ'ը պիտ լինի «մրմուռներ» և թոթովանքները հրապարակ հանել և այդպիսով նեղ տեղը դնել և չօր. Ս. Աւին որին որ նուիրուած են բոլոր ոտանաւորները, Մաւաւանդ որ պիտ սէրը, որը ունեցել է հեղինակը դէպի օրիոր-

դը— աւա՛ղ— յաւիտենական բնաւ չէ։ Մինչդեռ նա սկզբում երդուում է, որ ապրում է միայնեւթ այդ սիրով— ահա 55-րդ երեսի վերայ նա փոխում է իր երգի մեղեդին և ասում՝

Ես պիտի ձգտեմ կեանքիս ընթացքում  
Դէպի միայն, յաւիտենական...

Հաճոյք ու գգուանք, սիրոյ հեշտութիւն  
Տեսւմ է միայն ուղիդ մի վայրկեան։

Ուր էր որ հեղինակը սկզբից ևեթ այդ գաղափարին լի-  
նէր, նա այն ժամանակ ոչ ոտանաւորներ կրէր և ոչ էլ ի-  
լոյս աշխարհ կընծայէր այն՝ ինչ որ սովորաբար ծածկում են,  
բանդի ամօթ է։ Նրա ցանկութիւններն էլ այս փուլ աշխար-  
հում անշուշտ աւելի բարձր կլինէին, թէ չէ այժմ խոստովա-  
նում է հեղինակը՝

Ես կը ցանկայի...

Ծծել վարդագոյն շուրթիցդ նեկտար,

Հոլանի կրծքիդ գլուխս հանգեցնել...

Իսկ մի ուրիշ ոտանաւորի մէջ ցանկութիւն է յայտնում  
իր սիրուհուն լսեցմել այրուող կրծքին և համբուրելը— աւե-  
լացնելով միենոյն ժամանակ, որ երբ որ պ. Վահան Թաւար-  
բեգեանը համբուրում է— նա զոյվանում է։

Դա ինձ յիշեցրեց Քատինիցա օպերէտկայի փաշային,  
որը գրեթէ նոյն հանգամանքում ասում է «НѢМНОЖКО ПЕРМѢ-  
НІЯ, НѢМНОЖКО ОСВѢЖИТЬ— ЧТОБЪ ПОЛНА БЫЛА...»

Բայց բաւական է, մանաւանդ որ Մօզդօկը այնքան փոքր  
բաղաբ է, որ այդ տեսակ ոտանաւորների պատճառով կարող  
է սկանգալ էլ տեղի ունենալ։ Ես հաւատացած եմ, որ հեղի-  
նակը այլ ևս հազիւ թէ փորձ անի իր գաղտնիքները բանա-  
լու մեր առաջ ձիշտ է— սէրը մարդուս «բանաստեղծ» է շի-  
նում, բայց ոչ միշտ ոտանաւոր գրող բանաստեղծ։ Սիրահարուա-  
ծը հոգով բանաստեղծ է դառնում, նա բարձրանում է առօ-  
րեայ կեանքից, մտքով և ցնորքներով սաւառնում ուրիշ, եթե-  
րական աշխարհներում, նա սկսում է սիրել և հասկանալ ընդ-  
թիւնը, նա մաքրւում է և ողևորւում... Պատրաստ եմ հաւա-  
տալու, որ պ. Թաւարբեգեանն էլ սիրելիս վերաստեղծուել է,  
բայց բանաստեղծ չի դառել։ Ուրիշների նման նա էլ սխալուել  
է և կարծել է թէ ձիշտ է իր զգացմունքները արտայայտել  
ուրիշին, այն էլ գեղարուեստորէն։ Ոչ, դրա համար բաւական  
չէ սիրել, հարկաւոր է ծնունդ։

Մ. Բ.